ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/07

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Սմարթիմփայեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Եսայանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, «դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (arpis) «վճարման տվյալների» մուտքագրման ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-01»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 07.01.2022թ.-ի թիվ 26/26-1/196-2022 գրությամբ «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 29.12.2021թ. թիվ ՄԽ/12346-2021 գրության հիման վրա, 07.01.2022թ.-ին «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 07.01.2022թ.-ին:

07.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/07 համարի ծածկագիրը:

14.01.2022թ.-ին, 26.01.2022թ.-ին և 04.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 26.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.02.2022թ.-ին:

2. <u>ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ կադաստրի կոմիտեն 29.12.2021թ. թիվ ՄԽ/12346-2021 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ Կադաստրի կոմիտեի և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված «Դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (ARPIS) «Վճարման

տվյալների» մուտքագրման ծառայությունների մատուցման N ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04 պետական գնման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված ծառայության մատուցման ժամկետը խախտվել է, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից մատուցված ծառայությունը չի ընդունվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2-րդ կետը և 2.1.3-րդ կետի «բ» ենթակետը՝ Կադաստրի կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.01.2022թ.-ին գրությամբ դիմել է «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.01.2022թ.-ի թիվ 26/26-1/196-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 18.01.2022թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն 14.01.2022թ տեղի ունեցած նիստի ժամանակ հնչեցրած դիրքորոշման ցանկանում ենք հայտնել հետևյալը.

2021 թվականի սեպտեմբերի 06-ին ՀՀ կադաստրի Կոմիտեի (այսուհետ՝ Կադաստր, Պատվիրատու) և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն, Կատարող) միջև կնքվել է ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-1 ծածկագրով պետության կարիքների համար ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի շուրջ 17.09.2021 թ կնքվել է համաձայնագիր: Ըստ պայմանագրի ծառայությունների մատուցման ժամկետ սահմանվել

է 45 օր սկսած այն պահից, երբ կողմերի միջև կնքվում է համաձայնագիր: Այսինքն, ստացվում է, որ պայմանագրի գործողության ժամկետը եղել է 31.10.2021թ.

Պայմանագրի շրջանակներում Ընկերությունը պարտավորվել է իրականացնել որոշակի ծրագրային բարելավումներ ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային հարթակում: Պայմանագրով սահմանվել է ծառայությունների մատուցման ժամկետ պայմանագրի կնքման օրվանից սկսած 45 օր, բայց ոչ ուշ քան մինչև 25 դեկտեմբերի 2021 թ:

Որպես առանցքային փաստ ցանկանում ենք հայտնել հետևյալը, կողմերի միջև կնքված պայմանագրի առարկան հանդիսանում է ծրագրավորման ծառայություններ, այն է՝ ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ, իսկ ավելի կոնկրետ ծրագրային ապահովման ընդլայնումներ, այսինքն Կադաստրի կոմիտեի արդեն իսկ գոյություն ունեցող ծրագրային համակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու ծառայություններ, որն իր հերթին կարող է մատուցվել միայն և բացառապես մի պարագայում, եթե Պատվիրատուն ինքը թույլ է տալիս և ընձեռնում է համապատասխան տեխնիկական հնարավորություն այդ համակարգ մուտք գործելու և փոփոխություններ կատարելու համար: Ընդ որում, ըստ ընկերությանը հայտնի տեղեկությունների այդ համակարգը սպասարկվում է երրորդ անձի կողմից:

Այսինքն, Ընկերության կողմից ծառայությունների մատուցումը ուղիղ կապված է եղել Կադաստրի կողմից տրամադրվող որոշակի տեխնիկական հնարավորությունների հետ, որոնց մասին համապատասխան աշխատակիցները բազմաթիվ անգամ տեղեկացվել են, որի մասին փաստում է կողմերի միջև առկա գրագրությունը, որն էլ ներկայացվում է ստորև.

1. Այսպես, համաձայնագիր կնքելուց հետո նույն օրը 17.09.2021 թ Ընկերությունը Պատվիրատուին ուղարկել է աշխատանքների կատարման նախագիծը, որին ի պատասխան անմիջապես ստացել է Պատվիրատուի պատասխանը՝ առաջարկներով (տես՝ կից ներկայացված փաստաթուղթ 1):

2. Ի պատասխան կադաստրի առաջարկներին 22.09.2021 թ ընկերությունը մի քանի հարցադրում է արել, մասնավորապես հայտնել է իր անհամաձայնությունը "ARP1S" համակարգը սպասարկող ընկերության առաջարկների հետ և հիմնավորել է իր դիրքորոշումը: (տես՝ փաստաթուղթ 2}

3. 23.09.2021 թ Ընկերության աշխատակից Աննա Շահբագյանը Պատվիրատուի ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանին ուղարկել է ծանուցում առ այն, որ ցանկանում է կապ

հաստատել վերջին հետ և չի կարողանում: Պատվիրատուի ներկայացուցչի հետ ստացվել է կապ հաստատել միայն 2 օր հետո (տես՝ փաստաթուղթ 3):

4. 27.09.2021թ Ընկերության աշխատակից Աննա Շահբազյանը Պատվիրատուի ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանին կրկին անգամ ուղարկել է ծանուցում-գրություն հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի գործընկեր, տեղեկացնում ենք, որ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ21/04» ծածկագրով մրցույթի տեխնիկական բնութագրի հստակեցման աշխատանքների ընթացքում ARP/S համակարգը սպասարկող կազմակերպության առաջարկությունները չեն բավարարել, որպեսզի ստացվի ամբողջական պատկեր, իսկ մեր կողմից առաջարկված նախագիծը մերժվել է: Վերոնշյալի մասին տեղեկացվել է նաև հեռախոսազրույցի միջոցով 24.09.2021թ-ին՝ Աննա Սահակյանին: Խնդրում ենք, հնարավորինս սեղմ ժամկետներում, կազմակերպել հանդիպում Կադաստրի կոմիտեի հետ, հնարավորության դեպքում, ընդգրկելով նաև սպասարկող ընկերությանը, որպեսզի համաձայնեցնենք սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները.» (տես՝ փաստաթուղթ 4):

5. 28.09.2021 թ Ընկերության աշխատակից Աննա Շահբազյանը Պատվիրատուի ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանին ուղարկել է հետևյալ գրությունը. «Բարև Ձեզ, հարգելի գործընկեր; Կից ներկայացնում ենք մեր կողմից առաջարկվող լուծումները: Նաև, խնդրում ենք, փոխանցել սպասարկող ընկերությանը հետևյալը.

Հարգելի գործընկեր, խնդրում ենք, հաշվի առնել, որ ծրագրային կոդը չունենալու և կառուցվածքին ծանոթ չլինելու պատճառով, մենք պետք է ամբողջ ինֆորմացիան ստանանք ձեզանից, որից ելնելով առաջարկում ենք ցուցաբերել պատրաստակամություն մեր հարցերին պատասխանելու և անհրաժեշտ ինտեգրացիաները իրականացնելու համար: Առաջարկում ենք նաև ստեղծել որևէ եռակողմ հարթակ (չատ), որտեղ կարող ենք գրել միմյանց հարցեր և հնարավորինս արագ ստանալ պատասխաններ: Այս դեպքում մենք կկարողանանք միահամուռ ուժերով իրականացնել ՀՀ Պետական շահերից բխող կարևորագույն գործառույթը:.» Նշված գրությանը կցվել է նաև տեխնիկական առաջադրանքը (տես՝ Փաստաթուղթ 5):

6. 30.09.2021թ Պատվիրատուի ներկայացուցիչ Աննա Սահակյանից ստացվել է հետևյալ պատասխանը. «Հարգելի ՝ գործընկերներ, Կից ֆայլով ներկայացնում եմ Ձեր կողմից ներկայացված տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ մեր քոմենթները:

Միաժամանակ հիշեցնում եմ, որ կապը սպասարկող ընկերության հետ հնարավոր է իրականացնել միայն Կադաստրի կոմիտեի միջոցով.» (տես՝ փաստաթուղթ 6):

Այդ ընթացքում, սպասելով Պատվիրատուի աջակցությանը և գործողություններին՝ Ընկերությունը զուգահեռ իրականացրել է այլ աշխատանքները, որոնք հնարավոր է եղել:

7. 06.10.2021 Ընկերության ներկայացուցիչը գրություն է ուղարկել Պատվիրատուի ներկայացուցչին հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի գործընկեր, խնդրում ենք, մեզ տրամադրել 28.09.2021թ-ին մեր կողմից ներկայացված «Տեխնիկական մանրամասներ»-ում «Աշխատանքներիի իրականացման և թեստավորման համապատասխան տիրույթի ապահովում» բաժնում նշվածը, այն է՝ սերվերային տիրույթ՝ համակարգը տեղադրելու և ձեզ ներկայացնելու համար: Խնդրում Ենք, պատասխան նամակով նշել, թե մոտավորապես ինչ ժամկետներում կունենանք դա: Ձեր կողմից որպես մեկնաբանություն նշվել էր հետևյալը. «Mulberry համակարգը սպասարկումը իրականացնող կազմակերպության հետ հանդիպում կազմակերպել չենք կարող»: Խնդրում ենք, մանրամասնել, թե այդ դեպքում ով կարող է կազմակերպել այդ հանդիպումը: Այլ կառույցներին և ընկերություններին դուք պետք է ներկայացնեք, թէ ինչ աշխատանք պետք է իրականացնել, մեզ ներկայացնեք իրենց, որպես աշխատանքները իրականացնող ընկերություն, որպեսզի մենք կարողանանք համատեղ գործունեություն իրականացնել:

Կից ֆայլով ներկայացված է նաև «Տեխնիկական մանրամասներ» -ը ձեր և մեր կողմից մեկնաբանություններով հանդերձ:», որին ի պատասխան միայն 14.10.2021 թ ընկերությունը ստանում է հետևյալ գրությունը. «Հարգելի գործընկերներ, Ձեր կողմից ներկայացված հարցերի վերաբերյալ մենք հայտնել ենք մեր դիրքորոշումը, որը անփոփոխ է.» (տես՝ փաստաթուղթ 7):

Պետք է արձանագրել, որ Ընկերությունը այդ ողջ ընթացքում փորձել է ինքնուրույն կապ հաստատել սպասարկող ընկերության հետ, սակայն ապարդյուն: Այսինքն, մի կողմից Պատվիրատուն նշում է, որ սպասարկող ընկերության հետ կարող է կապ հաստատվել միայն իր միջոցով, բայց միևնույն ժամանակ ցուցաբերում է բացարձակ անգործություն և չի ապահովում այդ կապը:

8. 18.10.2021 թ Ընկերությունը տեղեկացնում է, որ պատրաստ են որոշակի աշխատանքներ, որոնք կարող է ցուցադրել, սակայն հնարսվոր չէ, քանի որ բացակայում է սերվերային հասանելիությունը, որին ի պատասխան 22.10.2021 թ՝ 4 օր հետո ստացվել է հետևյալ գրությունը. «Հարգելի Աննա, Արդեն իսկ պատրաստ որոշակի աշխատանքները

կարող եք ցուցադրել Ձեր սերվերի միջոցով՝ մեզ տրամադրելով հասանելիություն տես՝ փաստաթուղթ 8):

9. 23.10.2021 թ Ընկերությունը պատասխան նամակ է ուղարկել նշելով. «Հարգելի գործընկերներ, աշխատանքների ցուցադրման վերաբերյալ: Տրամադրեք մեզ Ձեր REAL IP-ն հասանելիություն տրամադրելու համար: Բայց այս տարբերակով դուք չեք կարողանա ուսումնասիրել, թե ինչպես են օգտատերերը Ձեր համակարգից դեպի մոդուլ մուտք գործում, իսկ այդ կտորի աշխատանքները կմնան կիսատ: Այդ իսկ պատճառով, խնդրում ենք, զուգահեռաբար գտնել տարբերակ, որպեսզի մենք կարողանանք տեղադրել համակարգը Ձեր ցանցի ներսում: Միառժամանակ, խնդրում ենք, տրամադրել մեզ հետևյալը՝

1. API, որով մենք կստանանք անշարժ գույքի մասին տեղեկատվությունը և կարտացոլենք համակարգում

2. Նկարագիր՝ մոդուլը օգտագործող օգտատերերի դերերի մասին, որպեսզի կարողանանք տարանջատել վերահսկողներին, իրավաբաններին և այլն:

3. Նկարագիր, թէ ինչ տվյալներ են տրամադրվելու օգտատերերի մասին (իդենտիֆիկատոր, անուն ազգանուն, պաշտոն, հասցիք և այլն), որի պատասխանը ստացվել է 27.10.2021թ. «Հարգելի՝ գործընկերներ, Տրամադրում ենք մեր իրական IP հասցեները ՝Ձեր կատարած աշխատանքների ցուցադրման համար 91.221.229.188, 212.42.195.109: Ձեր կողմից ներկայացված աշխատանքը ուսումնասիրելուց հետո, մեր կողմից կտրամադրվի համապատասխան API-ները, որոնք անհրաժեշտ կլինեն վերջնական արդյունքի ստացման համար:

2. "Իզի Փեյ" վճարահաշվարկային համակարգին հասանելիություն ունենալու համար կից ֆայլով տրամադրում եմ ընկերության կողմից ուղարկված ձևաթուղթը, որը անհրաժեշտ է լրացնել:

3. Հիշեցնում եմ նաև, որ Ձեր կողմից չի բավարարվել տեխնիկական առաջադրանքի 4.1 կետով նախատեսված պահանջը:» (տես՝ փաստաթուղթ 8)

10. Պատվիրատուի կողմից ստացված գրությանն ի պատասխան անմիջապես հաջորդ օրը՝ 28.10.2021 [D Ընկերությունը ուղարկել է հետևյալը. «Հարգելի գործընկերներ, այս տարբերակով դուք կուսումնասիրեք ոչ լիարժեք աշխատանք՝ համապատասխան API-ների բացակայության պատճառով: Բայց ընտրությունը Ձերն է: Ցանցային կարգաբերումներից հետո Ձեզ կտրամադրվի թեստային համակարգի հասցեն: Կից ֆայլով

ուղարկում ենք Ձեզ "Իգի Փեյ" ընկերության կողմից ուղարկված ձևաթուղթը ՝լրացված, ինչպես նաև խնդրում ենք տրամադրել "Իգի Փեյ" ընկերության կողմից տրամադրված JSON ֆայլերը, որոնք պարտադիր են ինտեգրացիոն աշխատանքներում: Տեխնիկական առաջադրանքի 4.1 կետով նախատեսվածը՝ այն է . "Պատվիրատուի հետ փաստաթղթային եղանակով համաձայնեցնի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված լրացումների և փոփոխությունների տեխնոլոգիական լուծումները և մանրամասն բնութագրերը, արտադեմային լուծումները, ինչպես նաև սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման, փորձարկման և հանձնման ժամկետները", մեր կողմից տրամադրվել է "Տեխնիկական մանրամասներ" անվանումով փաստաթղթի միջոցով:» (տես՝ փաստաթուղթ 9)

11. 01.11.2021-04.11.2021թթ ընկած ժամանակահատվածում ընկերությունը բազմաթիվ անգամ փորձել է կապ հաստատել Պատվիրատուի հետ, սակայն ապարդյուն:

12. 05.11.2021 թ Ընկերությունը գրություն է ուղարկել Պատվիրատուին հետևյալ բովանդակությամբ. «Հարգելի գործընկերներ, 2021թ. հոկտեմբերի 29-ին մենք էլեկտրոնային եղանակով առաջարկել էինք, որ 2021թ. նոյեմբերի 1-ին ժամը 15.00-ին (նշելով որ եթե ժամային առումով ունեք այլ առաջարկ, կարող եք ներկայացնել) կազմակերպենք Ձեզ հետ zoom հանդիպում, որպեսզի քննարկենք պրոյեկտի հետ կապված մեզ հուզող հարցերը, քանի որ տեխ. առաջադրանքում կան բավականին շատ կետեր, որոնք պարզաբանման կարիք ունեն: Սակայն Ձեր կողմից արձագանքը եղել է միայն 2021թ. նոյեմբերի 2-ին, նշելով որ Ձեզ մոտ երկուշաբթի խորհրդակցությունների օր է և այլ հանդիպումչեք կարող նախատեսել:

2021թ. նոյեմբերի 2-ին էլեկտրոնային նամակի միջոցով պայմանավորվել էինք, որ հանդիպումը տեղի կունենա նոյեմբերի 3-ին ժամը 12. 00-ին: Այդ հանդիպման ժամանակ մենք Ձեզ հղել ենք մեզ հուզող հարցերը, սակայն գրեթե բոլոր հարցերին Դուք պատասխանել եք, որ կքննարկեք և մեզ պատասխանները կտաք հաջող 2 օրերի, այսինքն նոյեմբերի 4-ի և 5-ի zoom հանդիպումների ժամանակ: Սակայն նոյեմբերի 4-ին հեռախոսազրույց ենք ունեցել, որի ժամանակ Դուք ասել եք, որ այդ օրվա հանդիպումը չի կարող տեղի ունենալ և հնարավոր է նաև ամսի 5-ի հանդիպումը նույնպես տեղի չունենա:

2021թ. նոյեմբերի 5-ին՝ այսօր, հեռախոսազանգի միջոցով մեզ տեղեկացրել եք, որ zoom հանդիպումը չի կարող տեղի ունենալ, քանի որ Ձեր աշխատակիցը չի կարող ներկա գտնվել, և պայմանավորվեցինք, որ գոնե հեռախոսային տարբերակով մեզ ներկայացնեք

մեր հարցերի պատասխանները: Հեռախոսազրույցի արդյունքում մենք ստացանք մեր հարցերի որոշ պատասխանները, որի համար շնորհակալ ենք, որոշների մասով էլ ասացիք, որ Ձեր՝ ավելի նեղ մասնագետների, աշխատակիցների հետ պետք է քննարկեք: Նաև հեռախոսազրույցի ընթացքում պայմանավորվել ենք, որ zoom հանդիպում կունենանք եկող երեքշաբթի՝ նոյեմբերի 9-ին, բայց ժամը հստակեցված չէ:»: (տես՝ փաստաթուղթ 10)

13. Պետք է նշել, որ ի վերջո քննարկումը տեղի ունեցել նոյեմբերի 9-ին միայն, այսինքն Ընկերությունը հայտնել է խնդիրների մասին, իսկ Պատվիրատուն հարկ է համարել քննարկել խնդիրները միայն այդ մասին տեղեկանալու 12-րդ օրը;

14. 12.11.2021 թ Ընկերությունը գրել է. «Հարգելի գործընկերներ, աշխատանքները շարունակելու և արդյունք ստանալու համար, խնդրում ենք, տրամադրել հետևյալը՝

1. MuHberry համակարգի ինտեգրացիոն աշխատանքները քննարկելու համար կոնտակտային տվյալներ կամ կազմակերպել հանդիպում

2. Տեխնիկական առաջադրանքով նախատեսված «Տեքստային տվյալներ» հատվածի վերաբերյալ մանրամասներ, որոնք պետք է պարզաբանեին իրավաբանները:

3. Տեխնիկական առաջադրանքով նախատեսված «Ավարտական փաստաթղթերի նախագծերի ձևավորում» հատվածի համար տրամադրել փաստաթղթերի օրինակելի ձևեր, որոնք պետք է որպես կաղապարիստրԽէօ) օգտագործվեն փաստաթղթերը ձևավորելու համար

4. Տրամադրեք API նկարագիր ARP/S համակարգի Անշարժ գույքի որոնման համար 5 ARP/Տհամակարգից դեպի «ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ» ՄՈԴՈՒԼ անցնելիս, պետք է տրամադրվի տեղեկատվություն օգտատիրոջ դերերի, անուն ազգանվան, զբաղեցրած հաստիքի մասին, որից ելնելով խնդրում ենք, սպասարկող ընկերությունից ստանալ որևէ նկարագիր և փոխանցել մեզ:

Կից ֆայլով ներկայացվում է նաև վճարահաշվարկայինի կողմից տրամադրված « VPN Site2Site details (IPSEC tunnel)» անվանմամբ ձևաթղթի լրացված տարբերակը»: Հիշյալ գրության պատասխանը ստացվել է միայն 11 օր հետո՝ 23.11.2021 թ: (տես՝ փաստաթուղթ 11)

15. Հերթական գրությունը Ընկերության կողմից ուղարկվել է 10.12.2021թ. «Հարգելի գործընկերներ, խնդրում եմ տեղեկացնել, թե երբ կարող ենք քննարկել անշարժ գույքի տեղեկատվական համակարգում «վճարային տվյալների» մուտքագրումը, քանի որ անցյալ հանդիպումների ժամանակ Դուք ասացիք, որ դա հետո կքննարկենք ու այդպես էլ չի եղել քննարկում այդ մասով ինչպես նաև նշել էիք որ, « ձևաթուղթը ներկայացվել է "Իգի

Փեյ" ընկերությանը, իրենց պատասխանը կներկայացնենք լրացուցիչ» բայց այն դեռևս չենք ստացել:

Նաև նշեմ, որ մենք կատարում ենք 30.11.21թ. Ձեր կողմից ուղարկված «Առդիր» փաստաթղթի մեջ ներկայացված աշխատանքները, որը ծավալային առումով բավականին մեծ է և որի մասին հստակ տեղեկատվություն չկա տեխնիկական բնութագրի մեջ: Վերջինիս մեջ գրված է միայն 2.4 կետի շրջանակներում:

Տեղեկացնում ենք նաև, որ Mulberry համակարգը սպասարկող ընկերության հետ իրականացվել է նախնական քննարկում, իրենց կողմից ներկայացվել է լուծման 2 տարբերակ.

1. Փաստաթղթերն ուղղորդվեն ARPIS համակարգ Եկից ձևավորվելիս, այսինքն, որպես փաստաթղթի ավարտ, իրականացվի «մուտքագրել ARPIS- համակարգ» գործողությունը՝ ինքնաշխատ եղանակով: Այս տարբերակը հնարավոր է իրականացնել շատ արագ, քանի որ իրենց մոտ կա անհրաժեշտ գործիքակազմը:

2. Փաստաթղթերն ուղղորվեն ARPIS համակարգ «մուտքագրել ARPIS» նոր գործողությամբ, որը հնարավորություն կտա մուտքագրել գործի կատարման ցանկացած փուլում, իսկ Mulberry համակարգում փաստաթուղթը կմնա նույն կարգավիճակում և կշարունակի իր բնականոն աշխատանքների հաջորդականությունը: Այս տարբերակում Mulberry համակարգը սպասարկող ընկերությունը կունենա որոշակի նոր մշակումներ իրականացնելու խնդիր: Նրանք պատրաստակամ են աշխատանքը իրականացնելու, բայց կարող է առաջանալ ժամանակային խնդիր:

Հաջորդ քննարկմանը պետք է ներկայացնենք Mulberry սպասարկողին, թե որ տարբերակն ենք ընտրում: Լավ կլիներ Ձեր կողմից որևէ մեկը ներկա լիներ խոսակցությանը:

Բազմիցս նշել ենք, որ աշխատանքների իրականացումը պատշաճ ապահովելու համար մեզ տրամադրեք նաև ARPIS համակարգի Անշարժ գույքի որոնման API-ն և Երկու համակարգերի միացման մասում ARPIS ից դեպի Դատական մոդուլ անցման տեխնիկական նկարագիրը: Խնդրում ենք, տրամադրել նաև դա կամ կազմակերպել որևէ հեռախոսազրույց սպասարկող ընկերության հետ վերոնշյալ հարցերը պարզաբանելու համար: Հաշվի առնելով ժամկետների սուղ լինելը, խնդրում ենք, հնարավորինս շուտ տրամադրել վերոնշյալը:», որի պատասխանը ստացվել է

16.12.2021 թ-ին՝ 6 օր հետո, այն էլ ընկերության կողմից նույն օրը նորից գրություն ուղարկելուց հետո (տես՝ փաստաթուղթ 12):

16. 21.12.2021 թ Ընկերությունը կրկին գրություն է ուղարկել Պատվիրատուին. «Հարգելի գործընկերներ, 10.12.21թ. նամակագրության միջոցով գրել էինք, մասնավորապես, "...խնդրում եմ տեղեկացնել, թե երբ կարող ենք քննարկել անշարժ գույքի տեղեկատվական համակարգում «վճարային տփալների» մուտքագրումը, քանի որ անցյալ հանդիպումների ժամանակ Դուք ասացիք, որ դա հետո կքննարկենք ու այդպես էլ չի եղել քննարկում այդ մասով... ":

Եվս մեկ անգամ, խնդրում եմ, կազմակերպել քննարկում վերոնշյալ թեմայով, քանի որ այդ մասով դեռևս ոչ մի քննարկում և պարզաբանում չի եղել, որի պատճառով էլ չենք կարողանում իրականացնել տվյալ հատվածի աշխատանքները՛.», որի պատասխանը այդպես էլ չի ստացել: (տես՝ փաստաթուղթ 13)*

17. Այսպես, Պատվիրատուի վերջին գրությունը ստացվել է 16.12.2021 թ, որով ի թիվս այլնի հայտնվել է . «(....)3. Իգի Փեյ ընկերության հետ VPN կապուղու հաստատման հետ կապված մենք 2021-11-30 09:57 ուղարկված նամակով տեղեկացրել էինք կապնվել Իգի ւիեյ ընկերության հետ՝ բլանկում նշված կոնտակտային տվյալներով:»: (տես՝ փաստաթուղթ 14)

18. Հարկ էնշել, որ ընկերությունը, հասկանալով, որ ծառայությունների մատուցման ժամկետը հնարավոր է խախտվի՝ առկա խնդիրների և Պատվիրատուի անգործության պատճառով դեռևս 20.10.2021 լ» ուղարկել է գրություն, որտեղ մանրամասն նշել է խնդիրները և վերջում հավելել է. «(....)Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ պահանջված միջոցները Ձեր կողմից չբավարարվելու հետևանքով հնարավոր է խախտվեն աշխատանքների կատարման համար պայմանագրով նախատեսված ժամկետները, որի համար մեր ընկերությունը պատասխանատվություն չի կրելու՛.» (տես՝ փաստաթուղթ 8)

Ցանկանում ենք արձանագրել, որ Ընկերությունը առ ներկա պահը չի ստացել իր կողմից ուղարկված գրությանը որևէ պատասխան կամ արձագանք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 779-րդ հոդվածի համաձայն՝ /. Պատվիրատուն պարտավոր է իրեն մատուցված ծառայությունների համար վճարել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված ժամկետներում և կարգով:

2. Կատարման անհնարինության դեպքում, որը ծագել է պատվիրատուի մեղքով ծառայությունները վճարվում են լրիվ ծավալով եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

3. Այն դեպքում, երբ կատարման անհնարինությունը ծագել է այնպիսի հանգամանքներից, որոնց համար կողմերից որևէ մեկը պատասխանատվություն չի կրում, պատվիրատուն կատարողին հատուցում է նրա կատարած փաստացի ծախսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ /. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը: Կողմերի միջև կնքված ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-1 ծածկագրով պետության կարիքների համար ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի 2.1.3 կետի համաձայն Պատվիրատուի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու իրավունքը կախված չէ որևէ պայմանից: Միևնույն ժամանակ, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն՝ Պատվիրատուի կողմից պայմանագրի վաղաժամկետ լուծումը ինքնին որպես հետևանք հանգեցնում է տվյալ մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ներգրավելուն:

Այլ կերպ ասած, պայմանագրով սահմանված չեն դեպքեր, երբ պայմանագրի լուծումը ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում, կախված է որևէ պայմանից, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և գործարար շրջանառության սովորույթներում ամրագրված են սկզբունքներ՝ երբ է պարտուսվորությունեերի խախտումը համարվում պարտապանի մեղքից անկախ և որ դեպքում պարտապանը պատասխանատվություն չպետք է կրի տվյալ խախտման համար:

Այսպես, եթե Պատվիրատուի կողմից պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքը՝ տվյալ մասնակցին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցանկում ներգրավելը՝ համարենք պատասխանատվության միջոց, ապա քննարկվող դեպքում այն չպետք է կիրառվի Ընկերության հանդեպ, քանի որ անհերքելի է, որ պայմանագրով սահմանված պարտավորությունների ժամկետում չկատարելը որևէ կերպ կախված չի եղել Կատարողից և Պատվիրատուն դրա մասին քաջատեղյակ է, ուստի նախաձեռնված ընթացակարգը ենթակա է մերժման:

Պատվիրատուն պարտավոր էր իր հնարավորությունների շրջանակներում աջակցել Կատարողին, ստեղծել այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ էին Կատարողի կողմից իր պարտականությունների կատարման համար, իսկ դրա անհնարինության պարագայում տեղեկացնել Կատարողին և նախաձեռնել պայմանագրի փոփոխության կամ լուծման այլ ընթացակարգ, քան կիրառվել է սույն դեպքում: Ինչդեռ Պատվիրատուն, տեղեկանալով խնդրի մասին, ցուցաբերել է բացարձակ անգործություն և անպատասխանատու վարքագիծ, որով փաստացի հիմքեր է ստեղծել՝ պայմանագրի ժամկետների խախտման համար: Պատվիրատուի անտարբեր և անպատասխանատու վարքագծի մասին խոսում է ոչ միայն այն հանգամանքը, որ վերջինս չի տրամադրել կամ ժամանակին չի տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և հասանելիություն, այլ նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուն արձագանքել է Կատարողի բարձրացրած խնդիրներին օրեր անց, այն էլ կատարողի կողմից այդ մասին պարբերաբար հիշեցնելուց հետո:

Նշվածից զատ ունենք մի իրավիճակ, երբ Պայմանագրի ժամկետը ավարտված լինելու պարագայում Պատվիրատուն փաստացի շարունակել է ներկայացնել պահանջներ կատարողին և կողմերի միջև շարունակվել է համագործակցությունը մինչև 2021 թ դեկտեմբերի 21-ը ներառյալ, որպիսի փաստը հաստատված է առկա գրագրությամբ:

Ավելին, պայմանագրի ժամկետի ավարտից հետո է միայն կատարողին տրամադրել այն բոլոր տեխնիկական հնարավորությունները, որոնք անհրաժեշտ էին աշխատանքների կատարման համար: այլ կերպ ասած, Պայմանագրի լուծման ժամկետից հետո մինչև 2021 թ դեկտեմբերի 21-ը՝ Պատվիրատուն փաստացի գտնվել է պայմանագրային հարաբերությունների մեջ Կատարողի հետ, ինչը վկայում է Պատվիրատուի՝ պայմանագրի ժամկետը Երկարաձգելու մտադրության մասին, հակառակ պարագայում վերջինս զրկված չէր պայմանագիրը վաղաժամկետ լուծել հոկտեմբերի 31-ից մինչև դեկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածում:

Ստացվում է, որ պայմանագրի ժամկետը համարվել է երկարաձգված առնվազն մինչև դեկտեմբերի 25-ը, որպիսի հնարավորություն նախատեսված է տեխնիկական բնութագրով, հակառակ պարագայում Պատվիրատուն որևէ գրագրություն չէր իրականացնի Կատարողի հետ, վերջինիս չէր տրամադրի տեխնիկական հնարավորություններ լուծված, գոյություն չունեցող պայմանագրի շրջանակներում և չէր անցկացնի կատարողի հետ քննարկումներ նոյեմբերի 9-ին և 17-ին «zoom» հարթակի միջոցով, և ամբողջ նոյեմբեր ամսվա և դեկտեմբեր ամսվա երեք շաբաթների ընթացքում որևէ կերպ չէր հաղորդակցվի Կատարողի հետ, այլ հենց նոյեմբերի սկզբին կտեղեկացներ՝ պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին:

Մինչդեռ, քննարկելով Պատվիրատուի գործողությունները, ունենք հետևյալ պատկերը. Ընկերությունը 2021 թ դեկտեմբերի 20-ին ներկայացնում է հաշիվ և արձանագրություն, 7 օր որևէ գործողություն տեղի չի ունենում, և դեկտեմբերի 27-ին՝ արձանագրությունը ստորագրելու կամ մերժելու վերջին օրը, ժամը 15:37-ին՝ այսինքն գրեթե օրվա ավարտին, Ընկերությունը ստանում է ծանուցում, համաձայն որի պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է դեկտեմբերի 27-ին՝ ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու պատճառով և նաև ծառայությունների ոչ պատշաճ մատուցման հիմքով:

Ինչ վերաբերվում է նաև ծառայությունների ոչ պատշաճ մատուցմանը, ապա Պայմանագրի համաձայն Ընկերությանը պետք է առնվազն նույն օրը նաև ներկայացվեր բացասական եզրակացությունը, որը սակայն չի ներկայացվել և որի մասին ընկերությունը տեղեկացել է միայն նախաձեռնված ընթացակարգի բողոք քննող անձի ուղարկած ծանուցմամբ:

Անդրադառնալով բացասական եզրակացության բովանդակությանը՝ դրանում նշվածին ըստ կետերի հերթականության, ցանկանում ենք հայտնել հետևյալը.

Կետ 1. «Mullberry» համակարգի հետ ինտեգրումը չի հասել վերջնական արդյունքի քանի որ, սկզբում Կադաստրի կոմիտեի կողմից չի տրամադրվել որևէ կապի միջոց ինտեգրվող համակարգերի ղեկավար մարմինների հետ քննարկում իրականացնելու համար: Վերոնշյալ խնդիրները հայտնելուց հետո՝ ստացվել է հետևյալ պատասխանը. «Mulberry» համակարգի սպասարկումը իրականացնող կազմակերպության հետ հանդիպում կազմակերպել չենք կարող»: Այնուամենայնիվ ընկերությունը կապ է հաստատել «Mulberry» համակարգը սպասարկումը իրականացնող կազմակերպության հետ քննարկվել

է որոշակի տարբերակներ և լուծումներ առաջարկել Պատվիրատուին, որին վերջինս պատասխանել է միայն 16.12.2021թ:

Կետ 2. Աշխատանքների սկզբից մինչև ավարտ Ընկերությունը բազմաթիվ գրությունների միջոցով խնդրել է տրամադրել «ARPIS» համակարգի «Անշարժ գույք»՝ ի ինտեգրման նկարագիրը, և, միևնույն է, չստանալով նկարագիրը, Ընկերությունը ստեղծել է թեստային տվյալներ, որպեսզի Պատվիրատուին հասկանալի լինի՝ թե տվյալ մասը ինչ կերպով է աշխատելու, տվյալ դաշտում թեստային տվյալներ մուտքագրելիս ինչպիսի տվյալներ են հայտնաբերվում: Միայն 16.12.2021 թ՝ին Պատվիրատուից ստացվելէ նկարագիր և հարցման հասցե, իսկ կապի միջոցը պետք է անցներ ԷԿԵՆԳ համակարգի միջոցով: Այս պահին վերոնշյալ աշխատանքները կիսատ են թողնվել, քանի որ 27.12.2021 թ ստացվել է պայմանագիրը լուծելու մասին ծանուցումը:

Կետ 3,4. Նախ պետք է արձանագրել, որ Պատվիրատուն չի նշել՝ թերությունը երբ է ի հայտ եկել: Համակարգը, որը տեղադրված է Ընկերության կողմից ստեղծված թեստային տիրույթում գտնվել է անընդհատ ծրագրավորման և մշակման փուլում և հնարավոր է, որևէ պահի ունեցել է նման վրիպակ: Ավելին, Պատվիրատուի կողմից չի նշվել՝ երբ է իրականացվելու թեստավորումը, որպիսի Ընկերությունը կարողանար այդ օրը տրամադրեր որևէ ամբողջական տարբերակ որտեղ հնարավորինս կբացառվեին վրիպակները:

Կետ 5. «Տեքստային տվյալներ» հատվածը ի սկզբանի տեղարված է եղել համակարգում՝ օգտվելով տեխնիկական մանրամասներում նշվածից: Քանի որ այդ հատվածը մանրամասն նկարագրված չէր տեխնիկական բնութագրում, Ընկերությունը խնդրել է տրամադրել այդ հատվածի վերաբերյալ ավելի մանրամասն նկարագիր, որին ի պատասխան ստացվել է գրություն, որ «այդ մասը դեռևս պետք է քննարկեն իրավաբանների հետ, որպեսզի պատասխան տան»: 01,12.2021 թ Ընկերությանն ուղարկվել է պահանջվող նկարագիրը, որը ծավալով և կառուցվածքով էապես տարբերվում է Տեխնիկական մանրամասներում նկարագրվածից: Հաշվի առնելով տվյալ հանգամանքը, Ընկերությունը ժամանակավոր հանել է տվյալ բաժինը համակարգից Պատվիրատուի կողմից ներկայացված աշխատանքները ավելացնելու համար, սակայն ի վերջո չի ավելացվել, քանի որ օրեր անց ստացվել է խնդրո առարկա ծանուցումը:

Կետ 6. «Հաշվետվություն» բաժնում արտահանվում են մուտքագրված բոլոր տվյալները ըստ ժամանակահատվածի ֆիլտրի, այսինքն այ մասով դիտարկումը տեղին չէ:

Կետ 7. Տեխնիկական բնութագրով նախատեսված «Անշարժ գույքի տեղեկատվական համակարգում «վճարման տվյալների» մուտքագրում» բաժնի վերաբերյալ բազմիցս առաջարկվել է իրականացնել քննարկումներ՝ արդյունքի հասնելու համար, սակայն Պատվիրատուի կողմից ստացվել է պատասխան, որ դեռևս չեն կարող անդրադառնալ այդ հատվածին: Պատվիրատուն, ըստ էության, տվել է միայն «ԻզիՓեյ» վճարահաշվարկային ընկերության հետ կապ հաստատելու տարբերակները, որն իրականացվել է, սակայն նկարագիր Պատվիրատուի կողմից այդպես էլ չի տրամադրվել: Ընդ որում պետք է ավելացվեր նաև համապատասխան կոճակներ, որը պետք է կատարեր «ARPIS» համակարգը սպասարկող ընկերությունը, քանի որ Կատարողին այդպես էլ չի տրամադրվել համապատասխան կոդերին հասանելիություն: Ավելին, բացի «ԻզիՓեյ» վճարման մոդուլից պետք է տրամադրվեր նկարագրեր այլ վճարահաշվարկային համակարգերի, e-payments համակարգի և գանձապետական վճարումների համակարգերին ինտեգրվելու համար, սակայն վերոնշյալներից ոչ մեկը չի տրամադրվել:

Ընդհանուր տեղեկության համար նաև ցանկանում ենք արձանագրել, որ Պատվիրատուն հրաժարվել է տրամադրել համակարգի կոդերը և տվյալների բազայի կառուցվածքը՝ ասելով, որ բոլոր աշխատանքները որոնց կարիքը կգտնվի առկա կոդերի հետ կիրականացնի Պատվիրատուին սպասարկող ընկերությունը: Սպասարկող ընկերությունն էլ իր հերթին հրաժարվել է բոլոր տեսակի ինտերակտիվ քննարկումներից և խուսափել հանդիպումներից. իսկ գրագրություններին պատասխանել է կարճ և անբովանդակ, ինչի արդյունքում խաթարվել է կատարվող աշխատանքների բնականոն ընթացքը, իսկ Ընկերության հարցին՝ արդյոք առկա է որևէ խանգարող հանգամանք, որ Պատվիրատուն հրաժարվում է տրամադրել աշխատանքներ իրականացնելու համար անհարժեշտ կոդերը, այդպես էլ չի տրամադրվել սպառիչ պատասխան;

Հավելելով նշենք նաև, որ կողմերի միջև առկա պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի 4.1 կետով սահմանված է փորձարկման 30- օրյա ժամկետ, ինչը նշանակում է, որ Պայմանագրի արդյունքի հետ որևէ տեխնիկական խնդիր առաջանալու պարագայում Կատարողը կարող է 30-օրյա ժամկետում շտկել դրանք, քանի որ փորձարկման ժամկետի սահմանումը հետապնդում է հենց տեխնիկական խնդիրներ հայտնաբերելու և վերացնելու համար, հետևաբար բացասական եզրակացությունում նշված դիտարկումները որևէ տրամաբանության մեջ չեն տեղավորվում:

Հիմք ընդունելով վերը նշված փաստական հիմքերը անվիճելի է, որ նախ պայմանագիրը չի կարող լուծվել դրանով սահմանված ծառայությունները նախատեսված ժամկետում չմատուցելու դեպքում, քանի որ ծառայությունները ժամանակին չեն մատուցվել միայն և բացառապես Պատվիրատուի անգործության պատճառով, ավելին կարծում ենք քննարկվող դեպքում վիճելի է՝ որն է պայմանագրի գործողության ժամկետը, քանի որ ըստ էության ժամկետի ավարտով այն չի դադարել՝ Պատվիրատուն պատվիրակել է, իսկ Կատարողը մատուցել է ծառայություններ, ինչը հիմնավորվում է վերոշարադրյալ փաստերով: Ամբողջ նշվածը հաշվի առնելով, անհերքելի է նաև, որ ցանկացած պարագայում բացակայում է Կատարողի մեղքը՝ ժամկետների խախտման մեջ, ուստի նախաձեռնված ընթացակարգը, որպես պատասխանատվության միջոց՝ պետք է մերժվի:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/07 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի միջև 06.09.2021թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-01» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (arpis) «վճարման տվյալների» մուտքագրման ծառայությունների ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

iii. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան

և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

iv. Պայմանագրի հավելված 2-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից 45-օրյա ժամկետ:

v. ՀՀ կադաստրի կոմիտեի և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի միջև 17.09.2021թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-01» ծածկագրով կնքված պետական գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

vi. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանի կողմից 22.12.2021թ.-ին տրվել է բացասական եզրակացություն (այսուհետ նաև՝ Եզրակացություն):

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 27.12.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ՄԽ/12238-2021 ծանուցման համաձայն՝ Կադաստրի կոմիտեի և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի սեպտեմբերի 06-ին կնքված ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-1 ծածկագրով պետության կարիքների համար ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի համաձայն՝ Կատարողի կողմից պետք է մատուցվեին ցանցային համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ՝ պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան, սակայն խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից մատուցված ծառայությունը չի ընդունվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետը, ինչպես նաև 2.1.3-րդ կետի «բ» ենթակետը՝ Կադաստրի կոմիտեն 2021 թվականի դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.01.2022թ.-ի թիվ 26/26-1/196-2022 գրությամբ «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ, որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Կարգի 110-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի ընդունման հետ կապված սույն բաժնով սահմանված գործողություններն իրականացվում են էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1) պայմանագրի կամ դրա մի մասի ընդունման նպատակով պայմանագիր կնքած անձը դրանով սահմանված ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը: Պատվիրատուի ղեկավարը հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, նույն համակարգի միջոցով տրամադրում է պատասխանատու ստորաբաժանմանը.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված հանձնման-ընդունման արձանագրությունն ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցիչն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով պատասխանատու ստորաբաժանման ղեկավարին է տրամադրում էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ եզրակացություն.

3) եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է՝

ա. դրական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում և էլեկտրոնային համակարգի միջոցով պատվիրատուի ղեկավարին է ուղարկում հանձնման-ընդունման արձանագրությունը և եզրակացությունը, որոնք վերջինս 1 աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով տրամադրում է պայմանագիր կնքած անձին,

բ. բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (arpis) «վճարման տվյալների» մուտքագրման ծառայությունների ձեռքբերում ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե մատուցվել է պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր

մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ի միջև 06.09.2021թ.-ին կնքված թիվ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-01» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 2-ով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագրի հաշվառման պահից 45-օրյա ժամկետում: Համաձայնագիրը կողմերի միջև կնքվել է 17.09.2021թ.-ին:

Պատվիրատուն, հաշվի առնելով գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Կարեն Գրիգորյանի կողմից 22.12.2021թ.-ին տրված բացասական եզրակացությունը, հիմք

ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետը, ինչպես նաև 2.1.3-րդ կետի «բ» ենթակետը, որոշել է միակողմանիորեն լուծել 06.09.2021թ.-ին կնքված թիվ «ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/04-01» ծածկագրով պետության կարիքների համար «դատական գործերի վարման» մոդուլի ստեղծման և կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (arpis) «վճարման տվյալների» մուտքագրման ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 27.12.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ՄԽ/12238-2021 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Կարգի 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված դրույթները, մասնավորապես՝ տվյալ դեպքում, Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով 22.12.2021թ.-ի բացասական եզրակացությունը, Մասնակցին տեղեկացնելով վերջինիս կողմից մատուցած ծառայությունների Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատոփ կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (կատարողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց համապատասխանեցնելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 07.01.2022թ.-ի թիվ 26/26-1/196-2022 գրությամբ «Սմարթիմփայեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/07 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**